

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկի Միոգոյան

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

Արաբագիտություն

Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ)10-21

Մերի Չիլիսիյան

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

Հարություն Մայժևոյան

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

Համիկ Երիցյան

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

Թյուրքագիտություն

Վարուժան Գեղամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

Մարիամ Մելքոնյան

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ 72-86

Ռաֆիկ Խաչատրյան

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ 87-98

Գառնիկ Դավթյան

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՉԱՆՈՒՄ 99-105

Թամարա Աղանյայան

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.) 106-117

Իրանագիտություն

Լիանա Պետրոսյան

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 118-123

Անի Նահապետյան

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ 124-140

Նարե Գևորգյան

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՉԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 141-152

Յասեր Քարամզադե Հաֆթխանի

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 153-160

CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

Iranian Studies

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE"	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

**ՆԱԽԱԳԳՎՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ
ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ**

Բանալի բառեր՝ Ադրբեջան, նախագահական ընտրություններ, խախտումներ, ճնշումներ, ընդդիմադիր

2003-2018 թթ. ընթացքում Ադրբեջանում անցկացված ՏԻՄ և խորհրդարանական ընտրություններն անցել են բավական լարված մթնոլորտում: Վերջիններս իշխանության կողմից ուղղորդվում էին ու նպատակ ունեին ՏԻՄ և Ադրբեջանի խորհրդարանում ունենալ հնարավորիս շատ իշխանական թևի ներկայացուցիչներ և ոչ միայն: Ընտրությունները անցնել են նաև, ընտրախախտումների, ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչների նկատմամբ ֆիզիկական ճնշումների և ընտրության մասնակցողների իրավունքների խախտման մթնոլորտում: Ընտրախախտումների ուղղորդված բնույթ կրելը պայմանավորված է եղել նաև ալիևյան վարչակարգի մշտական վերարտադրման համար պարարտ հող նախապատրաստելու՝ նախագահական ընտրություններում հաղթանակ տանելու համար:

2003 թ. նախագահական ընտրություններում 1 860 346² ձայն հավաքելով սկսվեց Հեյդար Ալիևի որդու՝ Իլիամ Ալիևի կառավարման ժամանակաշրջանը: Ալիևը դեռ չէր հասցրել ըմբռնվել նախագահական ընտրությունների հաղթանակը, երբ հոկտեմբերի 15-ի երեկոյան ցուցարարները, ովքեր դեռ էին Ալիևների ընտանիքին իշխանությունը ժառանգաբար փոխանցելուն ու գտնում էին, որ ընտրությունների արդյունքները կեղծվել են, դուրս եկան փողոց ու պահանջեցին չեղյալ հայտարարել նախագահական ընտրությունների արդյունքները: Ցուցարարները ինքնաբուխ հանրահավաք անցկացրին «Մուսավաթ» կուսակցության շտաբին հարող փողոցներում, որին մասնակցում էր մոտ 500 մարդ³: Մակայն այդ ցույցը վերածվեց արյունալի բախման: 2003 թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ Ադրբեջանում արդեն գրանցվեց 2 մահվան դեպք, որոնցից 1-ը երեխա էր, մյուսը տարեց՝ տղամարդ:

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ garnik.davtyan3@gmail.com

² <http://www.electionguide.org/elections/id/1905/>, “Republic of Azerbaijan. Election for president”, հասանելի է 20.04.2020

³ <https://www.gazeta.ru/2003/10/16/oppoziciuvba.shtml>, “Оппозицию в Баку били не сильно”, հասանելի է 18.04.2020

Աննախաղեպ ճնշումներին, ցուցարարների դաժան ծեծին անդադարձել էր նաև Кавказский узел պարբերականը: Վերջինս նշել է⁴.

- Հոկտեմբերի 15-ին Ադրբեջանի Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) մամուլի ծառայության ղեկավար Սադիգ Գեզալովը հայտնել է, որ 62 մարդ ձերբակալվել է:

- Հոկտեմբերի 15-16-ը 71 ՉԼՄ ներկայացուցիչներ իրենց աշխատանքային պարտականությունները իրականացնելուց բռնության են ենթարկվել: Նրանցից 49-ը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ: Կոտրվել կամ առգրավել են 6 հոգու լուսանկարչական և տեսանկարահանման սարքավորումները:

- Հոկտեմբերի 17-18-ը ալիյան վարչակարգը երկրով մեկ իրականացրել է մասսայական ձերբակալություններ: Նրա թիրախի տակ են հայտնվել տարբեր ընդդիմադիր, հասարակական, գիտական, ժողովրդավարական զարգացման կազմակերպությունների ղեկավարներ, անգամ դպրոցի ուսուցիչներ: Ձերբակալվել էին Ադրբեջանի Ազգային ժողովրդավարության հիմադրամի նախագահ Ուլվին Հաքիմովը⁵, Ղարաբաղի հաշմանդամների ասոցիացիայի նախագահ Էթիմադ Էսեդովը, աշխատանքից ազատել էին Գոյչայ շրջանի դպրոցի ֆրասներենի ուսուցիչին⁶: Ձերբակալվողերի թվին էին պատկանում նաև Ադրբեջանի Ազգային անկախության կուսակցության նախագահ Հեսեն Հեսենովը, Հույս կուսակցության նախագահը, Ադրբեջանի նախկին վարչապետ (1992-1993 թթ.) Փենահ Հյուսեյնովը⁷ և այլք:

- Հոկտեմբերի 21-ի դրությամբ ավելի քան 600 քաղաքացի գտնվել է ժամանակավոր կալանքի տակ: Բացի այդ, 12 մարդ անհայտ կորել է, հարյուրավոր մարդիկ ծեծի են ենթարկվել, 25 մարդ ծանր վիրավորվել է:

Վերոնշյալ դեպքերի վերաբերալլ ԵԱՀԿ ներկայացուցիչ Հաննա Գրոդեսկան, ով այդ ժամանակ դիտորդական առաքելությամբ Ադրբեջանում էր, BBC-ին տված հարցազրույցում նշել էր, որ եթե դա տեղի ունենար իր երկրում (Լեհաստան), ինքը դա կկոչեր պատերազմ իր ժողովրդի դեմ⁸:

⁴ <https://www.kavkaz-uzel.eu/articles/45504/>, “Азербайджан: Беспорядки продолжаются”, հասանելի է 18.04.2020

⁵ Human Rights Watch, “Crushing Dissent: Repression, Violence and Azerbaijan’s Elections”, USA, 2003, p. 40.

⁶ Նույն տեղում, էջ 47:

⁷ Human Rights Watch, “Crushing Dissent: Repression, Violence and Azerbaijan’s Elections”, USA, 2003, p. 26.

⁸ http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_3197000/3197588.stm, “Столкновения в Баку: есть две жертвы”, հասանելի է 18.04.2020

Ադրբեջանի 2003 թ. նախագահական ընտրությունները տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից արժանացան խորը քննադատության: Այդ կազմակերպությունները միևնույն ժամանակ անդրադարձել են և՛ դաժան ծեծի ենթարկված ցուցարարներին, և՛ ընդհանուր գնահատական տվել ընտրական գործընթացի վերաբերյալ: Այսպես, Human Rights Watch միջազգային կազմակերպության հրապարակած 2003 թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ գեկույց⁹ կազմված է եղել նախընտրական, ընտրությունների օրվա և հետընտրական ժամանակահատվածում՝ Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումների դեպքերի հիման վրա: Սույն գեկույցի կազման հիմքում ընկած են եղել Ադրբեջանում Human Rights Watch-ի հետազոտողների իրականացրած երկու առաքելությունները. առաջինը՝ 2003 թ-ի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 18-ը, իսկ երկրորդը՝ 2003 թ. նոյեմբերի 11-ից նոյեմբերի 25-ը: Այդ առաքելությունների ընթացքում Human Rights Watch-ի հետազոտողները հարցազրույցներ են անցկացրել ավելի քան 200 տուժողների և մարդու իրավունքների ոստահարման վկաների հետ: Հետազոտություններ են անցկացվել Բաքվում, ինչպես նաև Ադրբեջանի քաղաքներում և գյուղերում, ներառյալ Չապաթալայում, Իսաչմազում, Լենքերանում, Սաաթլում, Սոււմգայիթում և այլուր: Հեռախոսի միջոցով հարցազրույցներ են վերցրել նաև Ադրբեջանի այլ վայրերից:

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի պատվիրակության ղեկավար և ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդական առաքելության ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ համակարգող Ջիովաննի Կեպերը Ադրբեջանում անցկացրած նախագահական ընտրությունների վերաբերյալ հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով. «Մենք անհանգստացած ենք հասարակության մեջ փոխադարձ վստահության ցածր մակարդակից բխող լարվածությամբ»¹⁰:

Ամփոփողով 2003 թ. նախագահական ընտրությունները՝ կարելի է եզրակացնել, որ հենց 2003 թ-ից Ադրբեջանում հաստատվեց «նոր» բռնապետական կառավարման համակարգը: Այդ համակարգի ղեկին նստեց Իլհամ Ալիևը, ով ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը զիջեց ուժի և ահաբեկման սկզբունքին: Արհամարհելով Ադրբեջանի կողմից ստանձնած պարտավորությունները՝ Ալիևը գործի դրեց իշխանական աթոռը

⁹ Human Rights Watch, “Crushing Dissent: Repression, Violence and Azerbaijan’s Elections”, USA, 2003.

¹⁰ <https://www.osce.org/odihr/elections/55696>, “Joint statement on presidential election in Azerbaijan”, հասանելի է 19.04.2020

պահպանելու ծրագիրը, որի իրագործման վառ օրինակներից է 2008 թ. հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրությունները:

Ինչպես նախկինում, այնպես էլ այս ընտրություններում հաղթանակ տարավ Իլհամ Ալիևը՝ ստանալով 3 232 259 ձայն (87.31%): Այս ընտրությունները նախորդից տարբերվում էին նրանով, որ 2003 թ. ընտրություններին մասնակցած Մուսավաթի թեկնածու Իսա Ղամբարը ստացել էր 372 385 ձայն՝ զբաղեցնելով 2-րդ հորիզոնականը, իսկ 2008 թ. նախագահական ընտրություններին 2-րդ հորիզոնական էր զբաղեցրել Ադրբեջանի «Հույս» կուսակցության թեկնածու Իգբալ Աղազադեն: Վերջինս ստացել էր 104 279 կամ 2.81% վստահության քվե¹¹: Ստացվում է, որ ի համեմատություն նախորդ ընտրությունների ընդդիմությունը 268 106 ձայն պակաս է ստացել ու առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ ընդդիմության նկատմամբ կա քաղաքացիների վստահության անկում, սակայն դա այդքան էլ այդպես չէր: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 268 106 ձայների սակավությունը 2-րդ հորիզոնականի մոտ խոսում է այն մասին, որ ընդդիմադիր Մուսավաթ կուսակցությունը դեռևս 2003 թ-ից վայելում էր քաղաքացիների վստահությունը (եթե հաշվի չառնենք, այն որ 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ գրանցվել են մեծ թվով ընտրախախտումներ), սակայն չէր մասնակցել այս նախագահական ընտրություններին: Նրանք ընտրություններին չմասնակցելու որոշում կայացրել էին 2008 թ. օգոստոսի 2-ին: Ընտրություններին չմասնակցելու հիմնական պատճառներն են եղել հավաքների ազատության բացակայությունը, լրագրողներին բանտարկելը, այդ թվում՝ ընտրությունների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների հետևողական դիրքորոշման բացակայությունը¹²: Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել՝ Ալիևը բռնապետական կարգերը ամրացնելու նպատակով բազմակողմանի հարձակման էր անցել ինչպես ընդդիմադիր դաշտի, այնպես էլ ՉԼՄ ներկայացուցիչների վրա: ԱՄՆ Պետական դեպարտամենտը Մարդու իրավունքների գործելակերպի վերաբերյալ երկրի գեկույցներում անդրադարձել է Ադրբեջանի բոլոր այն ՉԼՄ ներկայացուցիչներին, որոնք կալանավորվել են 2003-2008 թթ.

¹¹ Azərbaycan Respublikası Mərkəzi Seçki Komissiyasının, “Azərbaycan Respublikası prezidentinin seçkiləri Protokolu”, 2008, Azərbaycan.

¹²http://www.turan.az/login_az.php?doc=%2Fhome%3F2Fturanne1%2Fpublic_html%2Fnews%2F2008%2Fsubsc%2Fpolitics_8_az.htm&anc=51498&pb=politics&op=exit, “İsa Qəmbər: İndiki halda seçkilərə qatılmamaq daha uygundur”, hımsənliji.az, 21.04.2020

ընթացքում՝ իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում գրած հոդվածների համար¹³:

Կարող ենք փաստել, որ Ադրբեջանի 2008 թ. նախագահական ընտրություններում տարեցտարի ահագնացել են մարդու իրավունքների, խոսքի ազատության և ազատ մամուլի վրա գործադրվող ճնշումները: Բոլոր այն անձիք՝ անկախ մասնագիտական ոլորտից, ովքեր փորձել են բարձրաձայնել Ադրբեջանի սոցիալական, կոռուպցիոն և այլ բնույթի խնդիրները կամ քննադատել են իշխանությանը, հայտնվել են ճաղերի հետևում: Հետաքրքիր է նաև այն, որ քաղաքական բնույթ կրող ձեռքարկությունները բաժանվում են 3 հիմնական խմբի՝ ընդդիմադիր, լրագրող, իրավապաշտպան, որոնց առաջադրվում է գրեթե նույն մեղադրանքները, մասնավորապես, թմրամիջոցների ապօրինի շրջանառում, գրպարտում, խուլիգանություն և կաշառքի ստացում: Նման ուղղորդված ձեռքարկումների կամ կալանավորումների դեպքերը հիմք ընդունելով՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր այս գործողությունները ուղղված են մեկ նպատակի՝ ապահովելու ալիևյան վարչակարգի վերարտադրությունը: Ճնշում գործադրելով ազատ կամարտահայտաման վրա՝ փորձ է արվել լռեցնել բոլոր նրանց, ովքեր կարող էին բարձրաձայնել ինչպես ապօրինությունների այնպես էլ ընտրախախտումների մասին տեղեկությունները:

Ընտրախախտումները, մարդու իրավունքների խախտումներն ու ճնշումները շարունակվել են նաև 2013 թ. հոկտեմբերի 9-ին՝ Ադրբեջանի հերթական ընտրությունների ժամանակ: Նշենք, որ այս ընտրություններում կրկին հաղթանակ տարավ Նոր Ադրբեջան (Yeni Azərbaycan) կուսակցության առաջնորդ Իլհամ Ալիևը¹⁴: Այս ընտրությունները կրկին անցան լարված մթնոլորտում ու լի ընտրակեղծիքներով:

ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելության ընթացքում արձանագրվել են մի շարք ընտրախախտումներ¹⁵, որոնք արտահայտվել են ընտրողների վրա ճնշում գործադրելով, գործադիր մարմնի կողմից թեկնածուի ընտրողների հետ հանդիպման համար արհեստական խոչընդոտներ ստեղծելով, դիտորդներին չթույլատրելով մասնացել ձայների հաշվարկին և այլն:

¹³ U.S. Department of State, “Azerbaijan Country Reports on Human Rights Practices – 2007”, USA, 2008, p. 8.

¹⁴ Azərbaycan Respublikası Mərkəzi Seçki Komissiyasının, “Azərbaycan Respublikası prezidentinin seçkiləri Protokolu”, 2013, Azərbaycan

¹⁵ <http://www.msk.gov.az/az/elections/prezident-seckileri/09-10-2013/>, “Ekspert qrupu tərəfindən baxılmış müəraciətlər - 2013”, hասանելի է 27.04.2020

2018 թ. արտահերթ նախագահական ընտրությունների տարին անցավ բավականին լարված: Ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ Իլհամ Ալիևը 2018 թ. փետրվարի 5-ին ստորագրեց արտահերթ նախագահական ընտրությունների մասին հրամանը, համաձայն որի՝ արտահերթ նախագահական ընտրությունների ժամկետ նշանակվեց նույն թվականի ապրիլի 11-ը¹⁶: Այս հրամանը դժգոհության ալիք բարձրացրեց ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչների շրջանակում: Նախագահական ընտրությունները, նախքան նախագահի հրամանագրի ստորագրման դեռևս չհաստատված տվյալների, պետք է տեղի ունենար 2018 թ. հոկտեմբերի 17-ին, սակայն իշխանությունը որոշել էր սեփական խաղի կանոնները: Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանի Ընտրական օրենսգրքի 6-րդ բաժնի 178 հոդվածի 178.1 կետով¹⁷ սահմանված է, որ ընտրությունների (նախագահական) օրը համարվում է Սահմանադրությամբ սահմանված Նախագահի լիազորությունների ժամկետի ավարտին նախորդ տարվա հոկտեմբերի երրորդ շաբաթվա չորեքշաբթի օրը, ալիևյան վարչակարգը, սեփական հայեցողությամբ առաջնորդելով, նշանակեց արտահերթ նախագահական ընտրություններ: Իհարկե, Ադրբեջանի Ընտրական օրենսգրքը նախատեսում է արտահերթ ընտրությունների անցկացման իրավական հնարավորություն, այն է՝ Ադրբեջանի Սահմանադրության 104 (ԱՀ Նախագահի լիազորությունների կատարման անհնարինությունը) և 107 (Ադրբեջանի Հանրապետության Նախագահի պաշտոնանկությունը) հոդվածները, սակայն այս դեպքում նույնպես բացակայում էր արտահերթ ընտրությունների անցկացնելու իրավական հիմքը: Ալիևյան բռնապետական գործելաոճի բացատրություն այն էր, որ վերջինս, 4-րդ անգամ 7 տարով Ադրբեջանը կառավարելու մոլուցքով տարված, նպատակ էր հետապնդում արտահերթ ընտրություններ անցկացնելու որոշմամբ զրկել ընդդիմադիր դաշտի քաղաքական գործիչներին ընտրություններին պատրաստվելուց: Նախագահական ընտրությունների արտահերթ անցկացումն ուներ նաև ընդդիմադիր դաշտում քաղաքական քառու ստեղծելու մտադրություն, ինչն ալիևյան վարչակարգին հաջողվեց անել: Արտահերթ ընտրություններ անցկացնելու հայտարարությունից հետո՝ մինչև փետրվարի 20-ը, հարկավոր էր գրանցել նախագահի թեկնածուներին:

¹⁶ <https://president.az/articles/26943>, “Növbədənənar Azərbaycan Respublikası Prezidenti seçkilərinin elan edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı”, hասանելի է 29.04.2020

¹⁷ “Избирательный кодекс” Азербайджанской Республики, Азербайджан, 2003, стр. 172.

Այսպիսով, 2018 թ. ապրիլի 11-ին, արտահերթ նախագահական ընտրություններում հերթական անգամ հաղթանակ տարավ Իլիամ Ալիևը¹⁸: Ընտրություններից անմիջապես հետո, ինչի արդյունքում Ալիևը ստացել էր 3 394 898 քվե՝ ընտրություններին մասնակցողների ընդհանուր թվի 85,68%-ը, ընդդիմադիր Դեմոկրատական ուժերի ազգային խորհուրդը հայտարարեց, որ ինչպես նախորդ ընտրություններում դրանք ոչ միայն չէին բավարարում միջազգային չափանիշներին, այնպես էլ այս անգամ դրանք բոլոր փուլերում ուղեկցվում էին Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի խախտումներով և բացահայտ կեղծվել էին՝ ի օգուտ չորրորդ անգամ անընդմեջ առաջադրված նախագահի թեկնածու Իլիամ Ալիևի¹⁹:

Ամփոփելով Ադրբեջանում նախագահական ընտրությունների ներքաղաքական պատկերը՝ կարելի է եզրակացնել, որ ողջ հետխորհրդային պատմության ընթացքում երկիրը չի ունեցել այնպիսի ընտրություններ, որոնք միջազգային դիտորդների կողմից ճանաչվել են որպես ազատ և արդար: Ալիևյան վարչակարգն արել է հնարավոր ամեն բան՝ սահմանափակելով ազատ խոսքը, ոտնահարելով մարդու իրավունքները, հետապնդելով բոլոր նրանց, ովքեր համարձակվել էին քննադատել իշխանությանը: Ադրբեջանի բոլոր 4 նախագահական ընտրությունները անցել են համատարած ընտրախախտումներով:

Հիմք ընդունելով վերոնշյալ ողջ փաստական և սպացուցողական հանգամանքերը՝ կարող ենք արձանագրել, որ ընդհանուր առմամբ Ադրբեջանը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու ժողովրդավար երկիր կոչվելու համար: Վերջինս ունակ չէ ոչ միայն ընտրական համակարգում իրավական բարեփոխումներ իրականացնելու, այլև սպառնալից քաղաքական բոլոր ուժերի համար հավասար և արդար պայմաններ:

КАРТИНА ПРЕЗИДЕНТСКИХ ВЫБОРОВ В АЗЕРБАЙДЖАНЕ

Гарник Давтян

(Резюме)

В статье анализируются президентские выборы в Азербайджане период 2003-2018 гг. В ходе анализа рассматривались как нарушения во время выборов, случаи физического давления на членов оппозиции, нарушения прав избирателей, так и наблюдения и выводы сделанные международными организациями.

¹⁸ Azərbaycan Respublikası Mərkəzi Seçki Komissiyasının, “Azərbaycan Respublikası prezidentinin seçkiləri Protokolu”, 2018, Azərbaycan.

¹⁹ <https://www.kavkaz-uzel.eu/articles/319031/>, “Оппозиционный Национальный совет Азербайджана отказался признать итоги выборов”, hushunetji է 28.04.2020